ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«-----» սեպտեմբերի 2013թ. **N-----Ա**

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 6-Ի Հ. 232–Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2 -րդ մասի 1-ին կետով.

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Երևան քաղաքի ավագանու 2011 թվականի մայիսի 6-ի <<Երևանի Փ.Բուզանդի փողոցի թիվ 1/3 հասցեում գտնվող շենքից անհատույց օգտագործման իրավունքով տարածքներ տրամադրելու մասին>> հ.232-Ա (այսուհետ՝ որոշում) որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) Որոշման 1–ին կետի 4–րդ ենթակետում <<2 տարի ժամկետով>> բառերը փոխարինել <<մինչև 2015 թվականի սեպտեմբերի 30-ը>> բառերով։

2) Որոշման 1–ին կետի 5–րդ ենթակետում <<2 տարի ժամկետով>> բառերը փոխարինել <<մինչև 2015 թվականի սեպտեմբերի 30-ը >> բառերով։

3) Որոշման 1–ին կետի 6–րդ ենթակետում <<2 տարի ժամկետով>> բառերը փոխարինել <<մինչև 2015 թվականի սեպտեմբերի 30-ը >> բառերով։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ – ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

<< ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 6-Ի Հ. 232–Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ>>
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Երևան քաղաքի ավագանու 2011 թվականի մայիսի 6-ի հ.232-Ա որոշմամբ Երևան համայնքի սեփականությունը հանդիսացող Փ.Բուզանդի փողոցի թիվ 1/3 հասցեում գտնվող վարչական շենքում մի շարք սուբյեկտների՝ այդ թվում <<Ռուսիա>> հասարակական կազմակերպությանը, <<Հայաստանի ուկրաինացիների ֆեդերացիա>> հասարակական կազմակերպությանը և <<Հանրային կապերի և տեղեկատվության կենտրոն>> պետական ոչ առևտրային կազմակերպությանը տրամադրվել են տարածքներ անհատույց օգտագործման իրավունքով:

<<Ռուսիա>> հասարակական կազմակերպության օգտագործման իրավունքի ժամկետը լրացել է 17.06.2013թ, <<Հայաստանի ուկրաինացիների ֆեդերացիա>> հասարակական կազմակերպության օգտագործման իրավունքի ժամկետը լրացել է 02.07.2013թ, իսկ <<Հանրային կապերի և տեղեկատվության կենտրոն>> պետական ոչ առևտրային կազմակերպության օգտագործման իրավունքի ժամկետը լրացել է 14.06.2013թ:

<<Ռուսիա>> հասարակական կազմակերպությունը դիմել է Երևանի քաղաքապետարան՝ Երևանի Փ.Բուզանդի փողոցի հ.1/3 հասցեում գտնվող շենքի 4-րդ հարկի 36.9քմ մակերեսով տարածքի անհատույց օգտագործման իրավունքի ժամկետի երկարացման համար: Հաշվի առնելով <<Ռուսիա>> հասարակական կազմակերպության նեդրումը Հայ և Ռուս ժողովուրդների բարեկամական կապերի զարգացման գործընթացում, բնակչության սոցիալական, բժշկական, հոգեբանական, մշակութային և կրթական կյանքում՝ առաջարկվում է տարածքի անհատույց օգտագործման իրավունքի ժամկետը երկարացնել ևս 2 տարի ժամկետով:

<<Հայաստանի ուկրաինացիների ֆեդերացիա>> հասարակական կազմակերպությունը ևս դիմել է Երևանի քաղաքապետարան՝ անհատույց օգտագործման ժամկետի երկարացման խնդրանքով: Հաշվի առնելով կազմակերպության ներդրումը դպրոցական տարիքի երեխաների, երիտասարդների և մեծահասակների շրջանում ուկրաիներեն լեզվի ուսուցման մեջ, առաջարկվում է Երևանի Փ.Բուզանդի փողոցի հ.1/3 հասցեում գտնվող շենքի 4-րդ հարկի 36.9քմ մակերեսով տարածքի անհատույց օգտագործման իրավունքի ժամկետը երկարացնել ևս 2 տարի ժամկետով:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ <<Հանրային կապերի և տեղեկատվության կենտրոն>> պետական ոչ առևտրային կազմակերպության աշխատանքային պայմանների ապահովումն անմիջականորեն նպաստում է ազգային համայնքների գործունեության ակտիվացմանը՝ ուղղված ազգային մշակույթի, լեզվի պահպանմանն ու զարգացմանը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության նախագահի օգնականի գրությունը, կազմակերպության աշխատանքներն արդյունավետ կազմակերպելու նպատակով առաջարկվում է Փ. Բուզանդի փողոցի հ.1/3 հասցեում 4-րդ հարկի 33.5քմ մակերեսով տարածքի անհատույց օգտագործման իրավունքի ժամկետը երկարացնել ևս 2 տարի ժամկետով:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

<< ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 6-Ի Հ. 232–Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ >> ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Երևան քաղաքի ավագանու 2011 թվականի մայիսի 6-ի հ.232-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» Երևանի քաղաքի ավագանու որոշման ընդունման առնչությամբ առաջանում է Երևանի քաղաքապետի 2011 թվականի մայիսի 24-ի հ.հ.2059-Ա, 2060-Ա և 2061-Ա որոշումների մեջ փոփոխություններ կատարելու մասին Երևանի քաղաքապետի որոշում կայացնելու անհրաժեշտություն:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

<< ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 5-Ի Հ. 232–Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ >> ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Երևան քաղաքի ավագանու 2011 թվականի մայիսի 6-ի հ.232-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» որոշման ընդունման կապակցությամբ Երևան համայնքի բյուջեի եկամուտներում և ծախսերում փոփոխություններ չեն սպասվում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ